«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը (ձևերը և միջոցները) և դրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը»

Հաստատություն՝ «Երևանի հ 149 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ»

Դաստիարակ՝ Վեներա Բագրատյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

1. Ներառականությունը նախադպրոցական տարիքի երեխայի կրթության գործընթացում ---------- 4

1.1 Նախադպրոցական ուսումնական հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների ձևավորմանը նպաստող մոտեցումներ ----------7

1.2 Ուսուցում և ներառում խաղի միջոցով ---------- 9

1.3 Նախադպրոցական տարիքի երեխայի հոգեբանական առանձնահատկությունները ---------- 10

Եզրակացություն ---------- 14

Գրականության ցանկ ---------- 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես խթանել և բացահայտել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և ճիշտ կազմակերպել նրանց հետ տարվող աշխատանքները: Թեման շատ արդիական է և մտածելու տեղիք է տալիս: Սմարթֆոնների և համակարգիչների հանդեպ հետաքրքրությունը դառնում է վտանգավոր և կախվածություն է առաջացնում հատկապես նախադպրոցական երեխաների մոտ: Դրա համար էլ մենք՝ նախադպրոցական ոլորտի մասնագետներս, ավելի շատ պետք է զինվենք գիտելիքներով, հետաքրքիր և գրավիչ դարձնենք պարապմունքները, խաղը դարձնենք ուսուցանող և նպատակային: Ճիշտ պլանավորենք և ճիշտ հարցադրումներով, տարիքային առանձնահատկությունները, երեխաների կարողունակությունները հաշվի առնելով կազմակերպենք ուսուցանումը: Ձևավորենք փոխադարձ վստահություն և հարգանք միմյանց նկատմամբ, սովորեցնել սիրել և ընդունել յուրաքանչյուրին՝ անկախ կրոնական կամ ազգային պատկանելիությունից, ֆիզիկական և մտավոր կարողություններից: Դառնանք երեխաների համար խաղընկեր և ուղղորդող, գիտակցենք սովորողների և եզակի և փոփոխվող կարծիքներին արձագանքելու անհրաժեշտությունը: Ներառական կրթությունը այնպիսի ծրագիր է, որ բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք, ստեղծում է պայմաններ առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար: Ներառական կրթության հիմնական նպատակն է յուրաքանչյուր երեխայի համար մշակել և պլանավորել իր առանձնահատկություններից ելնելով, հիմք ընդունելով չափորոշիչը: Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու իրավունք:

Հետազոտության նպատակն է ապահովել և անվտանգ դարձնել նրանց քայլերը դեպի գիտելիք և հասարակության լիիրավ անդամ:

Աշխատանքի նպատակը՝

1. Կրթության հավասար պայմաններ ստեղծել բոլոր երեխաների համար:
2. Բացահայտել յուրաքանչյուր երեխայի ուժեղ կողմերը, հնարավորություններն ու հետաքրքրությունները:
3. Խաղերի միջոցով նպաստել ֆիզիկական, մտավոր և հոգևոր-բարոյական զարգացմանը:

1. ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Որպես մեծահասակներ մենք հասկանում ենք, թե որքան բազմազան է աշխարհը, և որքան վաղ ենք մենք հնարավորություն ունենում ծանոթանալ այդ բազմազանությանը, այնքան ավելի մեծ է լինում մեր փորձը և լայն՝ մեր աշխարհայացքը: Ներառական կրթությունը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման համար առավել նպաստավոր միջավայր ապահովելու լավագույն տարբերակներից մեկն է, այն հնարավորություն է տալիս ծանոթանալ բազմազան միջավայրին, զարգացնել միջանձնային փոխհարաբերություններն ու հաղորդակցման հմտությունները: Այստեղ հիմնական նպատակը բոլոր երեխաների հանդեպ հարգանքի ձևավորումն է՝ ճանաչելով և գնահատելով նրանց բազմազանությունը: Բազմազանությունը դրսևորվում է տարբեր կերպ . զարգացման խանգարումներով կամ օժտվածությամբ: Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս տարբերվող երեխային հայտնվել իր հասակակիցների միջավայրում և նրանց հետ միասին ստանալ վաղ տարիքի զարգացման համար խիստ կարևոր նախադպրոցական կրթություն: Այսպիսի կրթություն ապահովող հաստատությունները պետք է պատրաստ լինեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան երեխային մասնակցել ցանկացած գործունեության, համագործակցել, ուսումնասիրել, խաղալ և սովորել հասակակիցների հետ միասին: Երեխաները սովորում են հաղորդակցվել միմյանց հետ, ճանաչում են աշխարհը, ընկալում այն իրենց երևակայության սահմաններում, իսկ մանկավարժն այս գործընթացում դառնում է խաղընկեր և ուղղորդող: Պետք է գիտակցել բոլոր երեխաների եզակի և փոփոխվող կարծիքներին արձագանքելու անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր երեխա զարգանում է յուրովի:

Նախադպրոցականի՝ ներառական միջավայրում զարգացումը և կրթությունը հնարավորություն են տալիս երեխաներին սովորել և զարգանալ մանկավարժների, ծնողների և ընտանիքի աջակցությամբ: Այս տարիքի առանձնահատկությունն այն է, որ երեխաները ոչ միայն կտրուկ աճում են հասակի և քաշի տեսանկյունից, այլև նրանց գլխուղեղն է զարգանում շատ արագ տեմպերով:

Նրանցից յուրաքանչյուրը զարգանում է յուրովի, և հմուտ մանկավարժը պետք է կարողանա անհատական մոտեցում ցուցաբերի և ճիշտ պլանավորի իր աշխատանքը: Աշխատանքը արդյունավետ է դառնում թիմային աշխատանքի շնորհիվ: Ներառական կրթության իրականացման կարևոր նախապայմաններից է համագործակցային աշխատանքների կազմակերպումը: Թիմային համագործակցային աշխատանքի միջոցով (գործընկերներ, ծնողներ / խնամողներ, բժիշկներ, համայնքում գործող այլ կազմակերպությունների մասնագետներ) հայտնաբերեն այն խոչընդոտները, որոնց բախվում են երեխաները զարգացման և կրթություն ստանալու գործընթացում: Այստեղ չկա մեկ բաղադրատոմս, որն արդյունավետ լինի բոլոր երեխաների և դեպքերի համար, ուստի պետք է պլանավորել, թե ի՞նչ անել և ինչպե՞ս նպաստել կոնկրետ երեխային զարգացմանը և կրթության կազմակերպմանը:

Ներառական նախադպրոցական կրթությունը երեխայակենտրոն է:

Ներառական նախադպրոցական կրթությունը պետք է ապահովի յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ համապատասխան պայմաններ: Սա նշանակում է ելնելով երեխաների զարգացման տարիքային օրինաչափություններից, զարգացման ընթացքից ի՞նչ կարող է և դեռ չի՞ կարող անել յուրաքանչյուր երեխա: Կարևոր է աշխատանքները պլանավորելիս անպայմանորեն հաշվի առնել այս գիտելիքները և տեղեկատվությունը: Այս տարիքում երեխաների զարգացման և կրթության ուղղությամբ իրականացված աշխատանքներն անմիջականորեն անդրադառնում են երեխայի հետագա զարգացման և հաջորդ կրթական աստիճանի՝ դպրոցական ուսումնառության նախապատրաստման վրա: Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ողջ գործընթացում շատ կարևոր է բացահայտել յուրաքանչյուր երեխայի ուժեղ կողմերը, հնարավորություններն ու հետաքրքրությունները: Կարևոր է երեխային դիտարկել և բացահայտել կարողություններն ու հնարավորությունները, հենվել երեխաների ուժեղ կողմերի վրա:

Շեշտը դնել այն բանի վրա, թե ի՞նչն է լավ ստացվում, ի՞նչ կարող են անել, ոչ թե ի՞նչ չի ստացվում, կամ չեն կարողանում անել: Խրախուսել յուրաքանչյուր փոքրիկ ձեռքբերման համար: Երեխան պետք է զգա ուշադրությունը, դրական վերաբերմունքը:

Գնահատումը իրականացվում է երեք փուլով

1.Նախադպրոցական մակարդակի գնահատում:

2. Տարածքային մակարդակի գնահատում:

ՏՄԱԿ-ների մասնակիցները շարունակական աջակցություն են ցուցաբերելու թե՛ երեխաներին, թե՛ ծնողներին, և թե՛ մանկավարժներին: Այս տեսակետից կարևոր է, թե որքանով է ՆՈՒՀ-ի մանկավարժը պատրաստակամ սովորել նոր մոտեցումներր, մեթոդներ, հնարներ, կիսել իր փորձը մյուս մանկավարժների հետ և սովորել նրանցից: Դիտարկումը տեղի է ունենում երեխայի բնականոն միջավայրում, աննկատ երեխայի համար, տևում է երկու շաբաթ: Շատ կարևոր է հնարավորությունների, կարիքների, զարգացման առկա մակարդակի դիտարկումը հետագա ուսումնառությունը պլանավորելու և կազմակերպելու համար:

3. Հանրապետական մակարդակի գնահատում, որն իրականացվում է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ) մասնա-գետների կողմից: Այս համակարգի շնորհիվ ապահովվում է յուրաքանչյուր երեխայի սահուն անցումը դեպի դպրոց:

Ներառումը սկսվում և կայանում է նախ մեր մտածողության, համոզմունքների և արժեքների մեջ և նոր միայն՝ քաղաքականության մեջ և պրակտիկայում:

1.1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՁԵԱՎՈՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացին առավելագույն մասնակցություն և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում: Խոսքի խանգարում ունեցող երեխաների զարգացման առանձնահատկությունները և խոսքի խանգարումների տեսակները տարբեր են:

Խոսքը բաղկացած է 4 հիմնական բաղադրիչներից՝

- Հնչյունային (հնչյունների արտաբերություն)
- Հնչութային (հնչութային լսողություն)
- Բառապաշար
- Քերականական կառուցվածք

Առաջին բառերն ի հայտ են գալիս 10 ամսականից մինչև 14 ամսական հասակում, որին հաջորդում է տարրական ֆրազային խոսքի ձևավորումը՝ 1.3-1.8 տարեկանում: Աստիճանաբար երեխայի աճին զուգընթաց հարստանում է բառապաշարը, բայց կան երեխաներ, որոնց մոտ նկատվում է խոսքի հապաղում: Այդպիսի երեխաների հետ պետք է կազմակերպել արդյունավետ և ճիշտ աշխատանք՝ նրանց խոսքը զարգացնելու նպատակով: Այս համատեքստում մեծ տեղ է տրվում երեխայի հանդեպ բարյացակամ և սիրալիր վերաբերմունքին, որը չպետք է նույնացնել ամենաթողության հետ: Շատ կարևոր է մանկավարժի անձնային հատկանիշները, քանի որ երեխան ընդօրինակում է մեծահասակների խոսքը, վարվելակերպը: Խոսքի հապաղում ունեցող երեխաները նեղացկոտ են լինում, ունեն բարձր հուզականություն, մանկավարժը պետք է կարողանա ճիշտ գնահատել երեխայի արարքները, դրդապատճառները, կարողանա ձևավորել դրական վերաբերմունք և փոխըմբռնում:

- Խոսքի խանգարում ունեցող երեխայի վրա ներգործելու անհատական մոտեցումների ընտրությունը:
- Մենք հաճախ ենք բախվում խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների, ովքեր դրսևորում են նեգատիվ դրսևորումներ: Այդ դրսևորումները երեխայի պաշտպանական մեխանիզմի դրսևորումն է: Պետք է շեշտը դնել նրա համար որևէ հետաքրքիր, ակտիվ աշխատանքի մեջ ներգրավման վրա՝ շեղելով երեխային: Դաստիարակը պետք է հարցերով դրդի երեխային խոսքային հաղորդակցման:

Մանկավարժները պետք է՝

- Ճիշտ արտաբերեն հնչյունները,
- Հստակ արտասանեն բոլոր բառերի վերջավորությունները,
- Խստորեն պահպանեն ուղղախոսության պահանջները,
- Խոսեն արտահայտիչ, փոխեն ձայնի բարձրությունը, խոսքի տեմպը, իմաստային շեշտի և դադարի պահպանումը,
- Երեխաների հետ խոսեն մի փոքր դանդաղ տեմպով, ոչ բարձր ձայնով և բարյացակամ տոնով,
- Մատչելի և կապակցված շարադրեն ուսումնական նյութը՝ հաշվի առնելով ոչ միայն տարիքը, այլ նաև խոսքի զարգացման մակարդակը:

Գոյություն ունեն խանգարումների տեսակներ, որոնք բացահայտելու, գնահատելու և աշխատանքը հավուր պատշաճի պլանավորելու համար պետք է տիրապետել որոշակի գիտելիքների: Դրանք են լսողական, տեսողական, մտավոր, շարժողականության, վարքային, ագրեսիվ վարքագիծ, հոգեբանական, աուտիզմ և այլն: Օրինակ՝ վարքային խնդիրներ ունեցող երեխաներին է.Էմերսոնին բնութագրում է որպես «հաճախականությամբ կամ տևողությամբ սոցիալապես անընդունելի այնպիսի վարք, որը լրջորեն վտանգում է տվյալ մարդուն կամ այլոց»:

1.2 ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՆԵՐԱՌՈՒՄ ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ

«Խաղը մի հեշտ ու հաճելի միջոց է, որ նպաստում է մարդու թե՛ ֆիզիկական, թե՛ մտավոր և թե՛ հոգևոր- բարոյական զարգացմանը»:

Հովհաննես Թումանյան

Խաղը ամենակարևոր միջոցներից մեկն է, որով երեխաները ստանում են շրջապատող աշխարհի մասին անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Ծրագրի հիմքում ընկած է խաղը՝ դրա համար անհրաժեշտ միջոցներով և պայմաններով: Խաղը երեխաներին հնարավորություն է տալիս ուսումնասիրել և ճանաչել շրջապատող աշխարհը, զարգացնել երևակայությունն ու ստողծագործական ունակությունները: Խաղի միջոցով սովորում են շփվել, համագործակցել, ընկերներ ձեռք բերել, տարբեր տեսակետներ ունենալ և արտահայտել դրանք, հետևել կանոններին և հրահանգներին: Երեխայի խաղալու համար պետք է ստեղծել պայմաններ, ապահովել բոլորի մասնակցությունը՝ անկախ նրանց զարգացման առանձնահատկություններից: Ներառական միջավայրում իրականացվող խաղը հնարավորություններ է բացում բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց առանձնահատկություններից:

Խաղերի բազմազանությունը՝

- շարժողականության զարգացմանն ուղղված,
- լսողական ընկալումը զարգացնող,
- հնչութային ընկալումը զարգացնող,
- լսողական ուշադրությունը զարգացնող,
- ռիթմի զգացողությունը զարգացնող,
- բառապաշարը զարգացնող,
- խոսքի քերականական կառույցի յուրացման:

Խաղերը բազմազան են և պետք է ճիշտ ընտրել, համապատասխանեցնել երեխաների կարողունակություններին, առանձնահատկություններին:

Նախադպրոցական տարիքը բաժանվում է մի քանի տարիքային շրջափուլերի, որոնցից յուրաքանչյուրի ժամանակ խաղն ունենում է այդ տարիքին բնորոշ դրսևորումներ:

1.3 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՅԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադպրոցական տարիքն ընդգրկում է 0-3, 3-ից մինչև 6 տարեկանն ընկած ժամանակը: Ինչպես նշում Վ.Ս.Մուխինան, սա մեծ ձեռքբերումների փուլ է, որը նշանավորվում է երեխայի հաղորդակցական ոլորտի ընդլայման, ինքնագիտակցության ձևավորման, ինքնահաստատման, և մի շարք այլ կարևոր փոփոխություններով: Երեխան սկսում է ճանաչել շրջապատը, ինքն իրեն, ընդօրինակում է վարքը: Նախադպրոցական երեխայի համար չափազանց կարևոր է զգալ, որ իրեն սիրում են այնպիսին, ինչպիսին նա կա իրականում: Այս տարիքում ձևավորվում է ինքնագնահատականը: Տարբեր հեղինակների կողմից անդրադարձ է կատարվել 3 տարեկանի ճգնաժամին և առանձնացվել են դրա հիմնական 7 ախտանիշները՝ նեգատիվիզմ, համառություն, ըմբոստություն, մեծերի արժեզրկում, բողոք և բունտ, ինքնակամություն, մեծերի նկատմամբ բռնակալություն: Ըստ Խուդոյանի «Այս ախտանիշները պայմանավորված են սեփական ես-ի նկատմամբ երեխայի գերզգայունությամբ և որպես լիարժեք մարդ ընդունվելու ձգտմամբ»: 5-7 տարեկանում երեխան փորձում է հասկանալ երևույթների առաջացման սկզբնաղբյուրները՝ տալով բազմապիսի հարցեր, որոնք անպատասխան չպետք է մնան: Մանկավարժները պետք է մշտական երկխոսության մեջ լինեն ծնողների հետ: Զրուցեն ծնողի և երեխայի շփման կարևորության մասին: Այս տարիքում երեխաները պետք է շփվեն հասակակիցների հետ: Ամեն դեպքում մեր առաքելությունն է գտնելև վեր հանել այն ներուժը, որով օժտված է երեխան, այդ ներուժը դարձնել հենարան՝ նրան կրթելու և զարգացնելու համար: Ուսուցիչ, երեխա, ծնող եռանկյունու ներդաշնակ փոխկապակցված աշխատանքն է ապահովում մեր հաջողությունը:

Ավագ խումբ

ՏԵՍԱԿԸ՝ Ինտեգրված նկարչություն, ապլիկացիա, կառուցողական

ՆՊԱՏԱԿ՝ ստեղծել անկաշկանդ միջավայր ստեղծագործելու համար: Սովորեցնել ստեղծել տոնական բացիկներ: Ուսուցման անհատականացման

նպատակով առաջադրանքները շերտավորել՝ հիմնական առաջադրանք, առաջադրանք ավելի մեծ ծավալով, ստեղծագործական առաջադրանք:

ԽՆԴԻՐՆԵՐ՝ Սովորեցնել ինքնուրույն որոշել նկարի բովանդակությունը նկարելով իրենց ցանկացած նվերը: Ճիշտ օգտվել մկրատից, սոսնձից, ճիշտ բռնել մատիտը:

ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՆՔ՝ Կնկարի տարբեր առարկաներ, թղթի ծալման միջոցով կկառուցի տոնական բացիկ:

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ Ճանաչողական և մոտիվացիոն: Երեխան ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի մեջ, դրսևորում է ճանաչողական հետաքրքրություն:

ԸՆԹԱՑՔ՝ Հանելուկի գուշակում, զրույց երեխաների սիրելի տոների մասին, Նոր տարվա մասին:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ՝ Այսօր մենք պատրաստելու ենք Ամանորյա բացիկներ (ցուցադրելով, թե ինչպես ենք թղթի ծալումով ստանում բացիկ) և առաջարկել բացիկի ներսի երեսին նկարել իրենց ցանկալի նվերը Ձմեռ պապիկից: Կիրառել շերտավոր ուսուցման ռազմավարությունը, թողնել, որ երեխաները ընտրեն առաջադրանքը և հարկ եղած դեպքում փոխել այն: Վերջացնելուց հետո գեղեցկացնել բացիկը, տոնական տեսք հաղորդել:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ՝ հանձնարարել զույգերով աշխատանք: Յուրաքանչյուր զույգ տեսնելով մեկը մյուսի բացիկը, պետք է գուշակի, թե ով ի՞նչ նվեր է ուզում ստանալ:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ մաքուր թուղթ, մկրատ, սոսինձ, գունավոր մատիտներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հմտություններս խմբում կիրառելուց հետո, ես եկա այն համոզման,որ նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքում պետք է լինել համբերատար,հետազոտող,պրպտող,ստեղծղգործող,սիրել և նվիրվել գործին:Ուսումնասիրել,դիտարկել,գնահատել,համագործակցել,պլանավորել աշխատանքը յուրաքանչյուր երեխայի կարիքից և առանձնահատկություններից ելնելով:Տանել երեխայակենտրոն աշխատանք և հոգ տանել նրանց մասին:Հենվելով երեխայի ուժեղ կողմերի վրա զարգացնել բացահայտել այդ կողմերը, հնարավորություններն ու հետաքրքրությունները:

Շեշտը դնել երեխայի ոչ թե սահմանափակումների,այլ կարողունակության վրա և զարգացնել այն:Երբեք չհուսահատվել,հիշել Անտուան դը Սենտ էքզուպերիի աղոթքը՝ «Փոքրիկ քայլերի արվեստը»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Մանկապարտեզի Ավագ խմբի կրթական համալիր ծրագիր(5-6 տարեկանների)

2.Լ.Սմբատյան,Լ.Սարգսյան Ուս.մեթոդական ձեռնարկ «Կերպարվեստի պարապմուքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում 2016թ»

3.Ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում Խաղեր և վարժություններ.Մեթոդական ուղեցույց Երևան 2022թ

4.Մտավոր խնդիրներ ունեցող սովարողների հետ աշխատող հատուկ մանկավարժի ուղեցույց Կրթության ազգային ինստիտուտ 2008թ.